

2016թ.

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

**ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ԲԱԶԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ**

Թեմայի անվանումը

***ՀՀ տնտեսական ու սոցիալական զարգացման վրա գիտության և կրթության
ազդեցության ինտենսիվացման գերակայությունները և կառուցակարգերը***

Թեմայի իրականացման համար նախատեսված ժամանակահատվածը

1 ՏԱՐԻ

Հաշվետու ժամանակահատվածը

01.01.2016թ. - 31.12.2016թ.

Թեմայի ղեկավարը

ՍՈՒՎԱՐՅԱՆ ՅՈՒՐԻ ՄԻՔԱՅԵԼԻ

տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս

Թեմայի մասնակիցներ

1. Մարգարյան Վարդան Ալբերտի – ավագ գիտաշխատող
2. Հայրապետյան Ռուբեն Արմենի - ավագ գիտաշխատող
3. Ասատրյանց Սարգիս Արմենի - ավագ գիտաշխատող
4. Քոչարյան Մարիանա Ռաֆիկի – գիտաշխատող

Մրագրի համառոտ բովանդակությունը

2015 թ. կատարված հետազոտությունների արդյունքներով Հայաստանի Հանրապետությունում գիտության և կրթության ուղղակի ազդեցությունը ՀՆԱ շարժընթացի վրա 1995-2013 թվականներին միջին հաշվով կազմել է 0.23 տոկոս, երբ այդ ժամանակաշրջանում տնտեսական աճի միջին տարեկան տեմպը կազմել է շուրջ 7 տոկոս: Ի դեպ, կրթության ներազդեցության չափը կազմել է 0.25, գիտությանը՝ 0.03 տոկոս: Տնտեսաչափական մեթոդներով գնահատման պարագայում էլաստիկության գործակիցը գիտակրթական համակարգի համար տատանվում է 0.2-0.3-ի միջակայքում: Ընդհանուր առմամբ, բոլոր մոդելային հաշվարկներում ՀՆԱ շարժընթացում համեմատաբար ցածր է գիտության նշանակությունը: Այդ երևույթը փաստում է, որ գիտակրթական համակարգը, հատկապես գիտահետազոտական աշխատանքները նպատակաուղղված չեն նորամուծական զարգացմանը, թույլ է գիտություն-արտադրություն կապը, հիմնարար գիտության նվաճումները չեն առարկայանում գիտակոնստրուկտորական մշակումների արդյունքում, չեն դառնում նոր տեխնոլոգիաների ու արտադրանքի տեսակներ, ինչին պետք է հաջորդի դրանց առևտրայնացումը:

Գիտահետազոտական խումբը 2016 թ. ընթացքում նպատակ ունի ուսումնասիրել ազգային նորամուծական համակարգի ստեղծման ու գործունեության միջազգային փորձը, գնահատել ՀՀ գիտակրթական համակարգի նորամուծական ներուժը ըստ տնտեսության տարբեր ոլորտների, առանձնացնել տնտեսության ու սոցիալական զարգացման համար լոկոմոտիվային նշանակության գերակա ոլորտները և ճյուղերը, որոնք պետություն-մասնավոր հատված համագործակցության եղանակով կարող են համապատասխան ներդրումների պարագայում և գիտակրթական համակարգի նպատակային զարգացման պայմաններում էական առաջընթաց ունենալ մրցունակ գիտատար արտադրանք թողարկելու գործում:

Այնուհետև գիտահետազոտական աշխատանքներն ուղղվելու են գիտակրթական համակարգին նորամուծական զարգացման ուղղվածություն հաղորդելու կազմակերպական, օրենսդրանորմատիվային, ֆինանսատնտեսական կառուցակարգերի ստեղծմանը, այդպիսով փորձ է կատարվելու առաջարկել

հիմնավորված ազգային նորամուծական համակարգի հայեցակարգ-նախագիծ: Այդ նպատակով հարկ կլինի բացահայտել այն պատճառները, որոնք արգելք են հանդիսանում գիտական ձեռքբերումների առևտրայնացման ճանապարհին: Միաժամանակ չափազանց կարևոր է առաջարկել կառուցակարգ, որը հնարավորություն կընձեռի ապահովելու կրթության և գիտության ոլորտների նորամուծական ներուժի նպատակային հզորացմանը և լիարժեք օգտագործմանը՝ մրցունակ տեխնոլոգիաներ ստեղծելու և գիտատար արտադրանք թողարկելու համար:

Կատարման ենթակա գործառույթների նկարագիրը

Քննական վերլուծության ենթարկել ազգային գիտակրթական համակարգի նորամուծական ուղղվածության աստիճանը, ուսումնասիրել ազգային նորամուծական համակարգերի ստեղծման ու գործունեության միջազգային փորձը և դրա օգտագործման հնարավորությունները:

Գնահատել ՀՀ գիտակրթական համակարգի նորամուծական ներուժը ըստ տնտեսության ոլորտների, առաջարկել տնտեսական ու սոցիալական զարգացման համար լոկոմոտիվային նշանակության գերակա ոլորտները և ճյուղերը, մշակել գիտակրթական համակարգի և տնտեսության փոխառնչությունների ակտիվացման գիտակազմակերպական, բարձր որակավորման կադրերի նկատմամբ պահանջի ապահովման ու ֆինանսատնտեսական կառուցակարգեր:

Գիտական սեմինարների ընթացքում քննարկել առաջարկություններ նորամուծական ներուժային ոլորտների և կառուցակարգերի վերաբերյալ, սցենարային վերլուծություններով գտնել օպտիմալ տարբերակներ, մշակել ազգային նորամուծական համակարգի առանցքային բաղադրիչները, առաջարկել անհրաժեշտ օրենսդրանորմատիվային, կառավարման կազմակերպական-կառուցվածքային և ֆինանսավորման համակարգերի փոփոխությունների հայեցակարգային նախագծեր:

Ընդհանրացնել և ամփոփել հետազոտության արդյունքները, շարադրել հաշվետությունը, հրատարակել ձեռք բերված արդյունքները գիտական հոդվածների և մենագրության տեսքով:

Ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշները

Համեմատական վերլուծական նյութեր, միջազգային և հայրենական վիճակագրական տեղեկություններ, հաշվարկներ, գծանկարներ, ամփոփ եզրակացություններ:

ՀՀ գիտակրթական համակարգի ներուժի ոլորտային գնահատումներ, դրա կիրառության վերաբերյալ առաջարկություններ և կառուցակարգեր:

Ազգային նորամուծական համակարգի հայեցակարգի նախագիծ: Հաշվետվություն, հոդվածներ, մենագրություն: